**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2**

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.12.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վահագն Ասատրյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Հրաչ Արևշատյանը, Արթուր Հայրապետյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

***Օրակարգ***

***<u>Աճուրդի արդյունքների ամփոփում և գնահատում</u>***

**1. Աճուրդի մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցել են հետևյալ կազմակերպությունները.

1. «ԱՌԿՏՈՒՐ» ՍՊԸ (ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 1/253)
2. «Լեվան» ՍՊԸ (Արմավիր, Մեքենագործների փողոց 1-ին շենք բն.8)
3. «Հ.Սմբատ» ՍՊԸ (Արարատի մարզ, գյուղ Բուրաստան)
4. «Մեգաօֆիս» ՍՊԸ (Փարաքար-Թաիրով, Մայրաքաղաքային 200)
5. «ՎԱՆԴԵԿՈՐ» ՍՊԸ (ք. Վանաձոր, Տարոն 2, ՔՇՀ4, 22/9)
6. Ա/Ձ Կարեն Գևորգյան (ք. Երևան, Լուկաշինի 1փ.9/1)

**2. Տվյալներ հայտում պահանջվող փասաթղթերի առկայության մասին**

2.1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**3. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԱՌԿՏՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և տեխնիկական բնութագիրը բավարարում է հրավերի պահանջներին:

3.2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ «Լեվան» ՍՊԸ-ի, «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի, Ա/Ձ Կարեն Գևորգյանի կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու *դիմում-հայտարարությունը չի համապատասխանում հրավերի պահանջներին,* մասնավորապես՝ 1-ին կետում «և իրեն փոխկապակցված անձինք» բառերը բացակայում են, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և տեխնիկական բնութագիրը բավարարում է հրավերի պահանջներին:

**4. Հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների առաջարկած գները և նախահաշվային գինը**

| չափաբաժնի համարը | Ապրանքի անվանումը |
|---|---|
| 1 | *աթոռ՝ գրասենյակային* |
| 2 | *բազկաթոռներ* |
| 3 | *բազկաթոռ՝ ղեկավարի* |
| 4 | *գրասեղաններ* |
| 5 | *կախիչներ* |
| 6 | *դարակներով պահարաններ* |
| 7 | *զգեստապահարաններ* |
| 8 | *ուղղահայաց շերտավարագույր* |

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | 1 | ԱՌԿՏՈՒՐ ՍՊԸ | 868000 AMD | 572999 AMD | 20 % | 687598.80 AMD | - |
| 1 | 2 | Լեվան ՍՊԸ | 868000 AMD | 580000 AMD | 20 % | 696000.00 AMD | - |
| 1 | 3 | Հ.Սմբատ ՍՊԸ | 868000 AMD | 608800 AMD | 0% | 608800.00 AMD | - |
| 1 | 4 | Մեգաօֆիս ՍՊԸ | 868000 AMD | 653000 AMD | 20 % | 783600.00 AMD | - |
| 2 | 1 | Լեվան ՍՊԸ | 1300000 AMD | 1070437 AMD | 20 % | 1284524.40 AMD | - |
| 4 | 1 | Ա/Ձ Կարեն Գևորգյան | 600000 AMD | 600000 AMD | 0% | 600000.00 AMD | - |
| 4 | | ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ | 600000 AMD | 650000 AMD | 0% | 650000.00 AMD | Մերժված |
| 4 | | Հ.Սմբատ ՍՊԸ | 600000 AMD | 700000 AMD | 0% | 700000.00 AMD | Մերժված |
| 5 | 1 | Մեգաօֆիս ՍՊԸ | 140000 AMD | 115738 AMD | 20 % | 138885.60 AMD | - |
| 5 | | ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ | 140000 AMD | 145000 AMD | 0% | 145000.00 AMD | Մերժված |
| 5 | | Ա/Ձ Կարեն Գևորգյան | 140000 AMD | 150000 AMD | 0% | 150000.00 AMD | Մերժված |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 1 | Ա/Ձ Կարեն Գևորգյան | 100000 AMD | 100000 AMD | 0% | 100000.00 AMD | - |
| 6 | | ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ | 100000 AMD | 120000 AMD | 0% | 120000.00 AMD | Մերժված |
| 7 | 1 | Ա/Ձ Կարեն Գևորգյան | 329000 AMD | 329000 AMD | 0% | 329000.00 AMD | - |
| 7 | | ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ | 329000 AMD | 400000 AMD | 0% | 400000.00 AMD | Մերժված |
| 7 | | Հ.Սմբատ ՍՊԸ | 329000 AMD | 500000 AMD | 0% | 500000.00 AMD | Մերժված |
| 8 | | Ա/Ձ Կարեն Գևորգյան | 276000 AMD | 300000 AMD | 0% | 300000.00 AMD | Մերժված |

**5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

5.1 Հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

***Հանձնաժողովը որոշեց՝***

1. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել 2022թ. դեկտեմբերի 30-ին, ժամը 10:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

   **Քարտուղարին՝**
   Eauction.armeps.am համակարգի միջոցով այսօր տեղեկացնել «Լեվան» ՍՊԸ-ին, «Մեգաօֆիս» ՍՊԸ-ին, Ա/Ձ Կարեն Գևորգյանին անհամապատասխանությունների վերաբերյալ և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ ________ Վահագն Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ ________ Հրաչ Արևշատյան

________ Արթուր Հայրապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ________ Մարինե Մուրադյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3**

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.12.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վահագն Ասատրյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Հրաչ Արևշատյանը, Արթուր Հայրապետյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

**1. Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ**

«Լեվան» ՍՊԸ-ի, «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի, Ա/Ձ Կարեն Գևորգյանի կողմից սահմանված ժամկետում շտկվել են անհամապատասխանությունները:

**Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, որի հիման վրա որոշեց՝**

1. Հակադարձ աճուրդի արդյունքում ընթացակարգի՝
   1 չափաբաժնի համար «ԱՌԿՏՈՒՐ» ՍՊԸ –ի,
   2 չափաբաժնի համար «Լեվան» ՍՊԸ–ի,
   5 չափաբաժնի համար «Մեգաօֆիս» ՍՊԸ–ի,
   4, 6, 7 չափաբաժինների համար Ա/Ձ Կարեն Գևորգյանի
   հայտերը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակիցներ:
2. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 1-ին կետերի համաձայն ընթացակարգի 3, 8 չափաբաժինները հայտարարել չկայացած:
3. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ընթացակարգի 1, 4, 5, 6, 7 չափաբաժինների համար հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, իսկ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար անգործության ժամկետ չի կիրառվում:
4. Անգործության ժամկետի ավարտից հետո 4-րդ աշխատանքային օրը ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ ____________ Վահագն Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Հրաչ Արևշատյան

_________________ Արթուր Հայրապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _________________ Մարինե Մուրադյան